


ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պոլիարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԿԻՆ ԿԱՐԵՆԻ

Համակ դրամ եռային դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ „Иравункъ“
Rédaction du journal „Iravounk“
ВАРНА (България).
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անող-
ջովին կամ մասամբ:
Խանութեան տոյր 20 սանթիմ. երե-
ֆէն անցի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի:

ԲԱՅՈՒՄ

ՎԱՌՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՄԱՐԱՆԵՐՈՒՆ

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒՄ

Ազգային երկսեռ վարժարանաց
և մանկապարտէզին բացումը տե-
ղի պիտի ունենայ յառաջիկայ
փետրվար ամսոյ 1 ին:

Այն ծնողք և պաշտպանք որ
կը փափագին աղգ. վարժարանաց
խնամոց յանձնել իրենց զաւակաց
կամ պաշտպաններու կրթու-
թիւնը, պարտին կանխաւ արձա-
նագրել տալ անոնց անունները:

Արձանագրութիւնք պիտի կա-
տարուին յառաջիկայ կիրակիէն
(18 յունվար) սկսեալ երկուշաբթի
չորեքշ. և ուրբաթ օրերը առա-
ւօտեան ժամը 8-10, իսկ կիրա-
կի օրերը ժամը 9-12, թաղ-
խորհրդարանին մէջ:

Ամսոյ վերջը արձանագրու-
թիւնք կը փակուին և անիչ յե-
տոյ ներկայացուց աշակերտք չեն
կարող ընդունուիլ դպրոցը:

Աշակերտք և աշակերտուհիք
պիտի հատուցանեն իւրաքանչիւրը
5 լէվ մուտքի տուրք մը, որ վը-
ճարելի է արձանագրութեան պա-
հուն և յատկացեալ վարժարանաց
նախնական պիտոյից հայթայթ-
ման:

Աշակերտք և աշակերտուհիք
թոշակաւոր են և անոնց իւրա-
քանչիւրին ամսաթոշակը արձա-
նագրութեանց աւարտէն ետքը
խորհրդոյս կողմէն որոշուելով՝
զրաւորապէս պիտի ծանուցուի
ծնողաց և պաշտպանաց:

Ի դիմաց թաղ. խորհրդոյ
Վ. Ատենալարի Ատենապետ
Յ. Մ. ՄԱՎԻ Մ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ
Վառնա 13 Յունուար 1898

Գոհութեամբ կը հրատարակենք
վերոգրեալ պաշտօնական ծանու-
ցումը որ կաւետէ մեզ թէ վառ-
նայի աղգ. վարժարանները վերջա-
պէս պիտի բացուին ընդհուպ:

Վարժարաններուն տրուելիք կազ-
մակերպութեան մասին հարկ կը
տեսնենք այստեղ քանի մը տեղե-

կութիւններ տալ որոնք կը պակ-
սին պաշտօնական ծանուցումին
մէջ:

Ուսման ծրագիրը զոր տեսնելու
առիթ ունեցանք, գոհացուցիչ ե-
րեսցաւ մեզ, թէ եւ բնականաբար
բարեփոխութեան ենթակայ է փոր-
ձառութեան ցոյց տալիք պէտքե-
րուն և նոր պահանջներու համե-
մատ:

Մանկապարտէզը պիտի կազմա-
կերպուի երկու բաժանումով և
մանկավարժական նորագոյն գրու-
թեանց համապատասխան կեր-
պով:

Մանչերու վարժարանը պիտի
բաղկանայ չորս կարգերէ որք
յարմարցուած են պուկար վար-
ժարանաց ծրագրին և մէկ արտա-
կարգ դասարանէ, ուր աշակեր-
տք պիտի հետեւի նաեւ գործնա-
կան կեանքի համար հարկաւոր
ուսումներու: Հայերէնի և պուկ-
կարերէնի հետ ֆրանսերէն լեզուի
ուսումնի ալ ստիպողական է, մինչ
անգլիերէն և գերմաներէն փափա-
գողներուն միայն պիտի աւանդուին
մասնաւոր վճարովով:

Աղջիկներու վարժարանը, ուր
ձեռագործի հետ պիտի ուսուցուի
նաեւ ձեռագործութիւն, պիտի ու-
նենայ երեք կարգ: Փափագողնե-
րուն դաշնակի դասեր ալ պիտի
աւանդուին մասնաւոր վճարու-
մով:

Ինչպէս ըսինք, ծրագիրը ինք-
նին գոհացուցիչ է, նոյնպէս
մտադրեալ ուրիշ կարգադրութիւն-
ները: Սակայն որովհետեւ տեսա-
կանին և գործնականին միջև մեծ
տարբերութիւն մը կայ իրաւունք
իբր աղգ. շահերու օրկան մը պար-
տականութիւն մը պիտի համարի
վարժարաններուն բացումէն ետք
ուշագրութեամբ հետեւիլ անոնց
ընթացքին և հետզհետէ կրելիք
բարեփոխութեանց ու իր անաչառ
գիտողութիւնները ընել:

Կրթական խնդիրը մեր ապա-
գայ գոյութեան խնդիրն է. այս
տեսակէտով անխնայ պիտի ըննա-
դատենք ինչ որ թերի և անբա-
նաւոր տեսնենք հայ մանուկին
տրուած կրթութեան մէջ, պատաս-
խանատուութիւնը որո՞ւ վրայ ալ

ծանրանայ, վարժարանի, տնօրէնի
թէ պաշտօնական մարմնոյ մը
վրայ:

Այս իրաւունքը այժմէն մեզ վե-
րապահելով, պարտինք միանգա-
մայն յիշեցնել թէ ծնողք ինչպէս
նաեւ առհասարակ վառնաի ժո-
ղովուրդն ալ պարտքեր ունին կա-
կատարելիք այս կենսական գոր-
ծին մէջ, որ պէտք իսկ չունի
մասնաւորապէս մեր կողմէն յանձ-
նարարուելու հանրային համակ-
րութեան և անկցութեան: Կը
յուսանք ուրեմն որ ասոնք չպիտի
պակսին բնաւ: Հակառակ պարա-
գային մէջ, մեր պարտքը պիտի
ըլլայ այս կողմէ ալ պատասխա-
նատուութիւնները ճշդիւ և պատաս-
խանատուներս ըննադատել ոչ նուազ
անաչառութեամբ:

ՀԱՆԴԵՍ

Վաղը, հինգշաբթի, եկեղեցու-
կան ժամերգութեան աւարտէն
ետքը՝ վիհ. կաթողիկոսի անուան
տարեգարծին առթիւ մաղթանք և
հանգէս պիտի կատարուի վառ-
նայի եկեղեցւոյն շրջափակին մէջ
ուր կաթողիկ. այցելու հովիւ Գեր.
Արսէն վարդապետ պիտի խօսի
կաթողիկոսութեան և խորհման
Հայրիկի նշանակութեան մասին,
եթէ, ինչպէս ինք Հայր սուրբը
ըսած է իր կիրակի աւուր քարո-
զին մէջ, բաւական հոծ բաղմու-
թիւն մը ներկայ ըլլայ հանգի-
սին:

Մենք տարակոյս չունինք թէ
ժողովուրդը պարտականութիւն
մը պիտի համարի փութալ խուռ-
ներամ գիմէ հանգիստվայրը, ուր
նաեւ հոգեհանգիստ պիտի կա-
տարուի ի յիշատակ ողբացեալ
Մկրտիչ վարդ. Տէրունեանի, ու-
րուն նոյնպէս անուան տարեգարծն
է:

ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ Ի ԹԻՖԼԻՍ

Վիհ. կաթողիկոսը դեկտ. 30ին
ժամաներ է Թիֆլիս, որոյ կա-
յարանի մէջ զինք դիմաւորած են
հայ հոգեւորականութիւնը, քա-
ղաքին ոստիկանապետը և ժողո-
վրդի մեծ բաղմութիւն մը: Ն.
Օծուլիւն վանքի եկեղեցին եր-
թալով աղօթելէ յետոյ, իջեա-
նած է Առաջնորդարանը ուր ի-
րեն բարի գալուստ մաղթեց Թիֆ-
լիսի փոխ-նահանգապետ Տ. Ստե-
ֆանովիչ որ յայտնեց թէ նահան-
գապետը անձնական տկարութեան
պատճառով չէր կրցած ներկայա-
նալ Ն. Օծուլիւն: Ներկայացան
նոյնպէս զինուորական և քաղա-
քային պաշտօնեաներ և այլ բազ-
մաթիւ անձեր:

Հանգիստտես բաղմութիւն այն-
քան մեծ էր, որ հարկ եղաւ
վանքի բակին դռները փակել
հրումներու և խառնաշփոթութեան
առջեւ անելու համար:

Ն. Օծուլիւնը օր մը ետք այ-
ցելութեան գնաց Կովկասի կա-
ռավարչապետ իշխան Կալիցինին,
որ ընդունելութեան մեծ դահլի-
ճին գրանն առջեւ իր Տիկնոյ հետ
ընդունեց Հայրապետը: Կաթողի-
կոսը այցելեց նաեւ կառավարչա-
պետի օգնական զօրավար Ֆրէ-
զէին: Քիչ ետքը կառավարչա-
պետը և իր օգնականը փոխա-
գարձ այցելութիւն տուին Ն. Օ-
ծուլիւն:

ԱԶԴ

Ներկայ տարեշրջանին մէջ Խա-
ւունք կը զրկուի այն բաժանորդներուն
որոնք նախորդ տարեշրջանին բաժ-
նեգիրը վճարած են: Եթէ իրենց մէջ
կան այնպիսիներ որ ա՛լ չեն ուզեր շտա-
նալ մեր թերթը, թող հաճին Գ. տա-
րեշրջանի մինչեւ երրորդ թիւը ստա-
նալէ ետքը, թերթը մեզ ետ դարձնել:

ՈՎ ՈՐ ՆԵՐԿԱՅ ՅՈՒՆ-
ՈՒՄԱՐ ԱՄՍՈՅ ԱՌԱՋԻՆ ԹԻ-
ԻԷՆ ՄԻՆՉԵՒ ԵՐՐՈՐԴԸ ԿԸ
ՍՏԱՆՍՅՈՒ ԵՏ ԶԻ ԴԱՐՁՆԵՐ,
ԲԱԺԱՆՈՐԴ ԿԸ ՀԱՄԱՐՈՒԻ:
Խմբագրութիւն

ՆԱՄԱԿ ԽՄԱՅԻՐՈՒԹԵԱՆ



Գաղթականաց նպաստի բաշխման կողմակերպութիւնը, զոր երբեմն Օրիորդ Ֆրայդէր կը վարէր այստեղ, ինչպէս յայտնի է, տեղի տուաւ ժողովրդեան մէջ շատ գանգատներու և խիստ քննադատութեանց։ Լրագիրները մասամբ միայն և շատ թոյլ կերպով արձագանք եղան անոնց, այն ալ Օրիորդին բարեացակամ ուշադրութիւնը հրաւիրելու համար, որպէս զի բարձունք բաշխման այն անկանոնութիւնները, որոց մասին տարածայնութիւններ կը շրջափռէին։ Աղգ. պաշտօնական մարմինները նոյնպէս կատարելապէս ձեռնպահ գտնուեցան այս խնդրոյ մէջ։ Ուրիշ կերպ ալ կարելի չէր գրեթէ, քանի որ Օրիորդ Ֆրայդէր կը յայտարարէր թէ ինք ստանձնած է իր պաշտօնեաներու մասին ամէն պատասխանատուութիւն, և թէ ինք ալ զինք զրկող և անզլ ոսկիները իրեն յանձնող բարեգործ անձերէ զատ ոչ ոքի համար ու հաշիւ տալու պարտական էր։

Ամէն ոք լուեց։ Օրիորդը շարունակեց իր մարդասէր գործունէութիւնը, աւարտեց զայն և մեկնեցաւ։

Սակայն նպաստի գործին մէջ կէտ մը կար, որ կերելի թէ խուսափեցաւ ամէնուն ուշադրութենէն, և որու մասին հաշիւ ու բացատրութիւն պահանջել ազգին անվիճելի իրաւունքն էր։

Ժամանակն է, կարծեմ, որ այս կէտը պարզուի հրապարակով։

Օրիորդին վառնա հասնելէն առաջ՝ երբ գաղթականութեան հոսանքը սկսած էր ողողել մեր քաղաքը, նպաստամատոյց յանձնաժողով մը կազմուեցաւ որ կեդրոնական մակդիրն ալ կը կրէր։ Այս յանձնաժողովը ի նպաստ գաղթականներուն հանգանակութիւն մը ըրաւ որուն մարդասէր օտարազգիներ ալ սերայօժար մասնակցեցին։ Հաւաքուած գումարը կը հասնէր 6000 ֆռ.ի, ըստ ըստ ոմանց 8000-ի։ Որոշ չինք գիտեր, որովհետեւ այս մասին յանձնաժողովը ունէր բացատրութիւն չտուաւ և ոչ հաշիւ մը ներկայացուց ցարդ առ որ անկ էր։

Արդեօք յանձնաժողովն ալ Օրիորդ Ֆրայդէրի պէս հայ ժողովրդին հաշիւ տալու պարտական չի զգար ինքզինք։ Սակայն Օրիորդը ուրիշ տեղ մը ներկայացուց անշուշտ իր հաշիւները և ինք մանաւանդ օրինաւորութեան բարի օրինակ ըլլալու էր մեր յանձնաժողովին։ Օրէնքը համարատուութիւն կը պահանջէ հանրային գործի մէջ մտնող ամէն անհատներէ և մարմիններէ, կը պահանջէ անխտիր։

Թանձնաժողովի անդամները ինք-

զինքնին օրէնքէ դուրս պարտին նկատել, եթէ կը գովամակին իրենց գործունէութեան հաշիւը տալու, ինչպէս կարելի է ինքնադրել իրենց ցարդ բռնած դիրքէն։

Պէտք է որ խնդիրը լուսարանուի։ Կամ հաշիւները ներկայացուելու են, կամ ամէնքս ալ բացարձապէս գիտնալու ենք թէ գաղթականաց կեդրոնական յանձնաժողովը կ'ը խրախ համարատուութենէ։ այս պարագային մէջ ազգն ալ կը գիտնայ իր խորհելիքը կամ ընելիքը։ Կըստսենք։

Վերի գիտողութիւնները բնաւ չեն վերաբերիր յանձնաժողովի ոչ հայ անդամներուն, որոնք իսկապէս միայն պատուոյ անդամակցութիւն ունեցան՝ առանց նպաստի գործին մատակարարութեան և հաշիւներուն մէջ ուղղակի գործօն դեր մը կատարելու և որոնք հանրային շնորհակալութեան արժանի պատրաստականութեամբ ընդունեցին աշակցել գերազանցապէս մօրդասիրական գործի մը։

Տեղացի խոյ մը

վառնա 2 յունուար

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Փ. Պօլիս, 3 Յունվար

Ասկէ առաջ գրած էի թէ հոս շրտական նպաստներ հաւաքուեցան թուրք վերադարձողներէ։ Բայց համար թրքահայատակ և պուլկարահայատակ հայերէ, ի՞նչպէս խոստացած է այս լուր։ Այս արտատպումին վրայ Արմէնիաի Փ. Պօլիս թղթակիցը փութացաւ յայտարարել թէ պուլկարահայատակ հայերը մասնակցած չեն այդ հանգանակութեան։ Թղթակցի մը առաջին պարտականութիւնն է իրողութիւնները հաղորդել ճշգրտութեամբ։ Դատակարգի մը հաճելի ըլլալու համար պէտք չէ որ ծածկէ ճշմարտութիւնը։ Մենք կը հաստատենք մեր տուած լուրը։ Մեր աղիւս բարեկամը կը յարձակի նաեւ յեղափոխական կողմակիւ պուլկանց վրայ, և ձրի կամ վճարուած թերթ կարգալու մասին գիտողութիւններ կրնէ։ Սակայն մեզ չի վերաբերիր պատասխանել անոնց։ Մեր գիտուն բարեկամը յուզուած չեղտերով կը գոչէ թէ պէտք է զարգացնել ժողովուրդը։ Զերմապէս կը համակրենք իր գաղափարին և կը կարծենք թէ բազմաթիւ չարիքներ վերցուցած պիտի ըլլանք ազգին մէջէն՝ զարգացնելով ժողովուրդը։ Ասոր համար կաշխատինք բարեփոխել գաղութները։ Բայց մեր բարեկամը եթէ կը կարծէ թէ փոփոխները պատելով և ներկայ հոգաբարձութիւնը և դպրոցական ներկայ խոճալի վիճակը պաշտպանող հանրագիրներ ստորագրել տալով կրնայ զարգացնել ժողովուրդը,

մեծապէս կը սխալի։ Ի՞նչ դիւրին բան, խօսքով յառաջդիմական ձեւանալ և յետագիմութեան աշխատիլ։ Ի՞նչ բարքեր, ի՞նչ ժամանակներ։

...

Երկու անգամ է որ պատահական թղթակից մը կը գրէ Փ. Պօլիս ազգային գործերուն վրայ։ Շնորհակալութիւն մեր անձանց թրքակամին։ Բայց պատահական թղթակիցներն ալ պարտին անկեղծ ըլլալ, ինչ որ չենք կրնար ըսել այս երկու թղթակցութեանց մասին ալ։ Գունաւոր սկիզբներով դիտուած են իրերը։ Մենք ալ կընդունինք թէ այն աղմկալից ցոյցը որ կատարուեցաւ եկեղեցւոյ շրջակային մէջ դպրոցական ուսանողներու մասնակցութեամբ՝ անպատեհ էր։ Տարակոյս չըկայ թէ ժողովուրդը պէտք էր ցուցունէր իր գոյութիւնը այն մէկ քանի յետագէմներու դէմ որքարգիւք եղած էին ազգային յառաջդիմութեան։ Բայց ժամանայը եւ ձեւը անյարմար էին։ Արդէն նորընտիր վարիչ ժողովը կազմուած էր անպիսի անձերէ որք ստուար մեծամասնութեամբ կուզէին բարեկարգել ներկայ մարմինները, կուզէին մաքրել դպրոցը յետագէմ տարրերէ, կուզէին կարգկանոն մտցնել ներկայ բարեկանական խառնակութեան մէջ։ Թեոադէմ ջիւղը տեսնելով ընտրութեանց աննպաստ ելքը, սկսած էին արգելքներ յարուցանել։ Պաշտօնական անձեր կը գրգռէին տգէտ ժողովուրդը բնիկի և օտարի խնդիրներ յարուցանելով։ Կը յայտարարէին թէ օտարները պիտի գրաւէին դպրոցը և եկեղեցին, և պիտի արտաքսէին բնիկ հայերը։ Կաղապարուած քուէներով ընտրուող հոգաբարձութիւնը կը յայտարարէր թէ ինք վաւերացուած է կառավարութեան կողմէ, թէ չը ճանչիր ներկայ ազգային վարչութիւնը և կառավարութիւնը միայն կրնայ զինք հրաժարեցնել։ Միւս կողմէ մէկ քանի անձեր որոց կ'ակնարկէինք մեր նախորդ թղթակցութեանց մէկուն մէջ, կը գրգռէին ամբիսին կիրքորը և կը գիմէին անարգ միջոցներու։ Այս պահուն էր որ մէկ քանի տաք-գլուխ երիտասարդներ կը կազմակերպէին այդ ցոյցը և առիթ կուտային նորընտիր ժողովին դժգոհութեան։ Բայց դժգոհութիւնը միայն ձեւին և ժամանակին մասին էր։ Մէկ քանի պինդգլուխ յետագէմներէ զատ գրէթէ բոլոր ժողովուրդը միահամուռ կը զգայ թէ վերջ մը տրուելու է այս անկերպարան, խոճալի, ցուալի կացութեանց, թէ դպրոցը միջոց մը և զած է ազագայ սերունդը բարոյապէս և մտաւորապէս թմրեցնելու, թէ վերջապէս ազգային բոլոր գործողութեանց մէջ պէտք է հիմնական փոփոխութիւն։ Այս

ընտրութիւնը միանգամ ընդմիջտապացուց ժողովուրդին ոգին և տրամադրութիւնները։

Այս է իրողութիւնը։ Կուրք կը շարունակէ յետագիմութեան և յառաջդիմութեան միջեւ։ Այս կուրքին մէջ կրնան սարգիլ անձեր որք անձնական նկատումներէ շարժուած են, ուրիշներ ալ կրնան գտնուիլ որք առաջին դժուարութեան առջեւ կը յուսահատին։ Սակայն Փ. Պօլիս զարգացած դասակարգը կը շարժի ազգային մեծ բարեշրջում մը յառաջ բերելու համար։ Զերմապէս կը շարունակէ իր գործը վերջնական յաջողութեան համար։ Մինչեւ հիմա իր կատարած գործէն դժգոհ ըլլալու պատճառ չունի։

Վերջին ընտրութիւնը ցուցուց լիութի թէ իր ջանքեր կը գնահատուին։ Թուլուելու, աճապարելու, յախուռն գործունէութեանց պէտք չը կայ։ Թաղթանակը պիտի գայ ուշ կամ կանուխ։

...

Համիտի տարեգարծին օրը Մակեթոնական քովիթէն մեծ միթիկ մը կազմակերպեց հոս՝ բողոքելու համար թրքական վարչակութեանց դէմ ի Մակեթոնիա՝ 4-5,000 անձեր ներկայ էին միթիկին։ Բաղմաթիւ հայեր փութացած էին ներկայ ըլլալ հոն՝ իրենց ջերմ համակրութիւնը յայտնելու իրենց Մակեթոնիայի եղբայրներուն դատին, և միանալու անոնց բողոքին ընդդէմ թրքական անլուր վարչակութեանց։ Սրտայոյզ էր տեսարանը։ Երկու հարստահարուած ազգեր իրարու հետ խառնուած կաղաղակէին «Միկի թուրքիան»։ Մէկ քանի պուլկար կորուստ անձնաւորութիւններ առնեալ օսուլութիւններ ըրին և ցուցուցին թէ թրքական բռնակալութիւնէն տղատելու միակ միջոցն է ապստամբութիւնը, թէ Եւրոպական համակրութիւնը կամ քաղաքականութիւնը երբեք չաշխատիր հոստահարուած ազգերու փրկութեան։ Երանի՜ թէ բոլոր հարստահարուած քրիստոնեայ ազգերը համոզուէին այս ճշմարտութեան։ Իրաւունքի միջոցով սրտագին յաջողութիւն կը մաղթենք Մակեթոնական քովիթէն ջանքերուն։

Սօփիա, 8 Յունվ.

97ի վերջին և 98ի առաջին եօթնեակը նշանաւոր տեղ պիտի բռնէ պուլկար ազգին կրօնաքաղաքական պատմութեան մէջ։

Մինչեւ ցարդ զինուորական դպրոցին մէջ եկեղեցի չկար. աշակերտք ի հարկին քաղաք կուգային, սակայն նուազ ձանձրալի չէր այս եկեղեցադնացութիւն տաքին, ցուրտին և հովին, այն ալ Սօփիայի մէջ, մանաւանդ որ սովորաբար այցելուած եկեղեցին դպրոցէն բաւական հեռի է. կերելի այս անպատեհութեան ա-

առջին առնելու և միւս կողմանէ սպառնալով մէջ կրօնական զգացումն արծարծելու և վառ պահելու համար զպրօքի հիւանդանոցն եկեղեցիի վերածուցաւ ուր ասկէ ետքը պիտի պաշտօնավարէ մնալուն մի փօփ :

Պալատին մէջ ցարդ կաթուղի եկեղեցի մը միայն կար իշխանին և իշխանուհիին դերգաստանին համար, ուր կաթուղի մի փասդէօն ի հարկին կը պաշտօնավարէ : Սակայն զահաժառանգին օրթոթքս դառնալէն ի վեր, հարկ անհրաժեշտ էր որ հաստատուէր օրթոթքս եկեղեցի մըն ալ՝ փոքրիկ իշխանն ի մանկութենէ կրօնականին մէջ ընտելացնելու համար և ահա դեկտեմբերի վերջին կիրակին ի ներկայութեան օրթոթքս պիտու թեանց քաղաքական ներկայացուցիչներուն և իշխանական ամբողջ գերդաստանին օծուցաւ օրթոթքս մաստուռ մըն ալ, ուր պուլկար օրթոթքս մի կրօնական պիտի ազօթէ մասնաւորապէս մանուկ իշխանին կենաց :

Այսպէս պուլկար եկեղեցւոյ հիման վրայ կը հաստատուի պուլկար իշխանական ցեղը պուլկար իշխանական պարտին մէջ :

Կրօնա-քաղաքական հանգէսով սկսանք նոր տարին ալ : Ամսոյս Յին պուլկարիոյ նախորդ իշխանին օսկերոտիքն Ս. Գէորգ եկեղեցիէն, ուր կը հանգչէին ցարդ, փոխադրուեցան յատկապէս կառուցուած գեղեցկակերտ դամբարանին մէջ, այսպիսի հանգէս տեսած չունէր այս քաղաքը :

Սօփիայի ամբողջ զօրաբաժինը մասնակցեցաւ հանդիսին, սպայք սեւ կապած ալ թեւերնին, հանդիսատես ժողովրդին թիւը շատ ստուար էր, ասեղ ձգելու տեղ չկար : Ժամը տասնուկէսին թնդաւ նօթի առաջին հարուած մը իմացուց թէ սակերոտիքն եկեղեցիէն դուրս հանուած էին, հետզհետէ արձակուեցան տակաւին 20 թնդաւ նօթ :

Անկէ ետքը հինգ վայրկեանը անգամ մը թնդանօթի հարուած կը լսուէր ցփնը հանդէսին :

Ոսկերոտիքը դուրսեցան մի շքեղ մեծակիւր կառքի մէջ՝ վրան ձգուած զինուորական աշխարհական, զոր անմոռանալի իշխանը կրած էր Սերպօ-Պուլկար պատեւը : Բազմին ժամանակ, կառքը շրջապատուած էր բարձրաստիճան զինուորականներէ : Թափօրն սկսաւ ծանր քայլերով յառաջանալ զէպի դամբարանը, առջեւէն կիրթային զօրքեր, պսակաբարձ կառք մը, պսակներ իշխանին, նախաբարական ժողովին, քաղաքականութեան, հին սպայից և հանգուցեալին քրով և եղբօրը կողմանէ, ամէնքն ալ շատ պարզ վերտառութիւններով, սակայն երկու պսակներ մասնաւոր ուշադրութիւն գրաւեցին, մին վիթթօրիա թագուհիին կողմանէ, օմսմ

տ'աֆէգիսի և տ'առմիսասիսի վերտառութեամբ, հանգուցեալին այրիէն, հարգընառ կոմսուհիէն էր երկրորդ պսակը որ ուշադրաւ էր թէ իր ասեղով և թէ իր արտայայտ վերտառութեամբ :

Թափօրապետն էր ինքն իշխանը որ ալ թեւը սեւ կապած՝ իւր նախորդին կառքին ետեւէն կերթար հետիոտն ընկերակցութեամբ իւր եղբօր, իշխան Յիւլիպի, որ մի քանի օրէ ի վեր հիւրն է պալատան, և շրջապատուած Գերմանիոյ և Անգղիոյ հիւպատոսներէն և անմահ հանգուցեալին անձնական քարտուղար և կոմսուհիին խորհրդական Տ. Մանտէն, ամէնքն ալ պաշտօնական համազգեստով, վերջինը նաեւ իւր ներկայացուցիչ Լուի Պալմէմպէրկ իշխանին՝ պուլկար փոխ-գերդաստանի համազգեստով :

Սիւրբգիտ կը հետեւէր և գերման բողոքականաց երէցը :

Կոմսուհին ինչպէս ի սկզբան գոց կառքով կանուխէն Ս. Գէորգ եկեղեցիէն գնաց, նոյնպէս եկեղեցիէն ալ առանձինն ուրիշ փողոցներէ անցնելով գնաց դամբարանը, ուր կը սպասէր վերջին համրոյր մըն ալ տալու իւր ողբացեալ ամուսինին նշխարներուն : Ժամ տասնեակուկէսին միջոցներ թափօրն հասաւ ի դամբարան, ուր զետեղուեցան մնացորդքն սովորական պաշտօնական թուղթերով :

Իշխանը շատ յուզուած արտասանեց մի քանի խօսք ի յիշատակ հանգուցեալին և կոմսուհիին ձեռքը սեղմելով փակեց հանդէսը, որ իւր բոլոր պարագայիք պուլկարիոյ վերածնութեան պատմութեան մէջ առաջնակարգ տեղ մը պիտի բռնէ :

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Ի նպաստ Սիւ. Ընկերութեան (ընթերցարանի) տնտեսական օգնութիւն

ՄՈՒՏՔ	Յր. Ան.
Տարած տոմսակ	785. —
Նուէր երեք ազգայիններէ	4. —
	789. —
* *	
ԵԼՔ	Յր. Ան.
Չը ծախուած տոմսակ	378. —
Պակաս գինով ծախուածներու տարբերութիւն	43. —
Թատերական խմբին վճարուած	130. —
» արաչի »	50. —
Նուագախումբի »	20. —
Տոմսակ և ազգաբարութիւն տպելու	18. —
Դռնապանի և ազգ փակցնելու Ապառիկ	2. 80
Գանձապահին քով պատրաստ գրամ	129. 20
	789. —

ԼՐԱՔԱՂ

Յ. Այվազովսքիի նոր ծովանկարներու ցուցահանդէսէն և իր երկու նկարներուն վիճակահանութենէն գոյացած է 3057 ռուպլի և 50 կ. ի նպաստ կարօտ թըրքահայերու և Բոսնիոյ :

— Եղբայրական Օգնութիւնը, զոր Տ. Զամչեանց հրատարակեց աշակցութեամբ ռուս և հայ նշանաւոր գրագէտներու ի նպաստ կարօտ թըրքահայոց, մեծ ընդունելութեան արժանացեր է հասարակութեան կողմէն : Առաջին տրւագորութիւնէն որ 3600 օրինակ տպուած էր՝ ցարդ անվաճառ մնացած է փոքր մաս մը միայն, զոր գներն է ռուս գրավաճառ մը : Կըսուի թէ երկրորդ տպագրութիւն մըն ալ պիտի հրատարակուի նոր յաւելուածներով :

— Ռուսիոյ վախճանած կրթական նախարար կոմս Գելեանսոնցի մասին հետեւեալ տեղեկութիւնները կը կարգանք Արձազանքի մէջ :

«Կոմս Իվան Դաւիդովիչը ծնուել է Հաշտարիւսում 1818 թուին, հայադաւան էր. ամուսնացած էր յայտնի հայրենասէր Բարեդործ Լազար եան դստեր հետ : Ռուս սաստանի ազգային լուսաւորութեան նախարար էր 1885 թուին : Նրա օրով ներմուծուած է նոր համալսարանական կանոնադրութիւնը, վերակազմուել է Դորպատի համալսարանը, հայ ծխական ուսումնարանները անցել են ազգային Լուսաւորութեան նախարարութեան տեսչութեանը և այլն և այլն : Իվան Դաւիդովիչը վախճանուեցաւ 80 տարեկան հասակում, անդաւակ : »

Հետեւեալ միջոցներով խմբագրութեանս պէտք է դրամ խրկել :

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ քաղաքներէն և գիւղաքաղաքներէն թոշկենսի պօստով կամ թոշկենսի գաւառով : Պուլկարիոյ գիւղերէն՝ երբ չէ կարելի վերի միջոցներով խրկել՝ 5 կամ 10 սանթիմնոց նամակագրութեամբ (բոստա բուլետ) ալ կընդունուի :

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ պէտք է խրկել մընիօրսով :

Րուսահայէ, եգիպտոսէ, Գաղղիայէ և ուրիշ արտասահմանի երկրներէ մանկաբոսով :

Ով որ տարբեր կերպով և տարբեր միջոցներով մեզ դրամ կը խրկէ՝ վնաս և կորուստ կը պատճառէ :

ԱԶԴ

Իրաւունք կը ծախուի Սասուն արձարանի ծխավաճառ Պ. Վահան Անտոնեանի, Մուսալլա գուրու գահվէճի Պ. Զակար կէօղիւպէօյի և Լուսին և Ապարիւրահան ձգկիթին զէմ Հայկական Գրատան մէջ ի վաճառ :

ԻԼԱՆ

Կէչէն սէնէտէն կաղէթամբա ապօնէ օրուպտէ պօրճարընը էօտէմիշ օլան զէվաթա պու սէնէ տախի կաղէթա եօլանըմադա օլտըղնտան, Կէր քիմքի պու եէնի սէնէտէն իթիպարէն Իրաւունքա ապօնէ օրմագ արղու իթմէզ իսէ իւչիւնճի նօմէրօյա գատար րէտտ իթմէլի տիր :

ՀէՐ ՔԻՄ ՔԻ ԵԷՆԻ ՍԷՆԷՏԷ ԿԱԶԷԹԱՄԲԱԶԸՆ ԻԻՉ ՆՕՄԷՐՕՍԸՆԸ ԳԱՊՈՒԼ ԻՏԷՐ ՎԷ ԿԷՐԻ ԵՕԼԼԱՄԱԶ ԻՍԷ, ԱՊՕՆԷ ԹԱՆԸԼԱԶԱԳ ՏԸՐ :

«Իրաւունք» մոնէսթրիկի

ՉԻՆ ՎԷ ԵՎՐՈՒՄ

Մօրնիկի քօսք նամ ինկիլիզ կաղէթապ տէյօրքի, Չինտէ օլան իթիլափ ու թէսիթիթի սիլաճէ մուհաֆազա իթմէլէ գաղղըլտըղը թագաւորտէ Արմանիա վէ Ֆրանսա, Րուսիայա գարչը պիր հարէթէթաէ պուլընմըլ օլաճաղըմբա շիւբէ եօզ տըր : մամաֆիի Չինին պաղը էնալէթէրի վար տըր քի՝ օրատա Ինկիլթէրանըն գօնթօյը նօղսան օլմաղա կէլմէզ, հիւքիւմէթին պու նօթթատաքի մէնֆաաթլարա կէօզ գաբամայաճաղը մէմուլ օլընուր :

Տէյի Մալ կաղէթապընը պէյանընա կէօրէ, Ինկիլթէրա, Րուսիա վէ ճարոնիա պէյնիտէ Գօրա հաղղընտա պիր իթիլափ (համաճայնութիւն) հասըլ օլմուլ տըր :

Վիէննա Բօլիթիշէ գօիկսոնսէնճ կաղէթապընը Լօնտա մէաֆիլի սիւհասիլէսինտէն ալտըղը խապէրէրէ կէօրէ ճարօնիա հիւքիւմէթի եաղընտա պիր պէյաննամէ նէշը իլէ Ինկիլթէրանըն Չին մէսէլէսինտէ թուլտըղը բօլիթիպաընա թէմամէն իլթիլաք էլլէտիկիլի լան իաէճէք տիր :

Բէթինտէն հաղղտըղը վէճիլէ Չին հիւքիւմէթի Րուսիանըն իսթիգրազա տալիր իթիլիլի թէթիթի րէտտ իթմէլուպ, անճագ Ինկիլթէրանըն տաւ հա մագպուլ շարթլարէ մուսլէնէթ իաէճէլի իւմիտի իլէ Րուսիա իլէ միւղէթէրաթընը թէթիլի էլլէմիշ տիր :

— Շանգ — Հայտան Սքանսաւրա եաղղըլտընա կէօրէ, Գիաու Չիւնըն Արմանիայա թէթիլի խուսուրընտա քի մուգալլէնամէ իսպարաթը րէտիլէյէ նաղարէն հէնուլ իմզա իտիլմէտիլի Բէթինտէն իսպար օլընմըլ տըր : ճարօն հիւքիւմէթի մուսլէտէնին գաթիլն իմզալանմաընա գարչը ֆէվզէլաւտէ թիլիլաղ իթմէթաէ տիր : Ֆրանսանըն «Հայ — Նան» առաւարը գապթ իթմէթ էֆթաըն մէյտանա չըզմաը իւղէրինէ Սուլֆ նամ ինկիլիզ գըրչըլտը տէրնալ մէզթիւր առաւարա տօղրու հարէթէթ իթմիշ տիր :

— Ինկիլթէրանըն ազսաի շարք տօնանմաըն ումում գօմանտանը ամիրալ Վիմօրը համիլ պուլընան Չայնա նամ ինկիլիզ բաթա վաբօրը Բօրթ — Սախտէն Չինտէ աօղրու հարէթէթ իթմիշ տիր :

—X—

Պիր գաչ սէնէ մուգատոտէմ
բրէնս Եօրկի Զինտէ Զար հազ-
րէթլըրինին հայաթընը գուրթուն-
մըչ օլտըղընտան նաչի Զար բրէնսէ
պիր միւքաֆաթ իթմէք սըղուսը
իլէ, անըն կիրիտ Բրէնսի (վալի)
թալին օլընմասը իչիւն Սուլթանը
իծպար իթմէք իսթէյօր իսէտէ,
տիկէր տէվլէթլըրտէն Սուլթանս
ճէսարէթ վըրէնլէր պուլընտըղը
ճիհէթլէ ճէվապը րէտտ վըրտիկի
րէվայէթ օլընըյօր : Սլթան-
պօլտան ալընան սօն Պալպսնիք
Թէկէկրաֆը Զինօվիէֆին մէզքիւր
իտտասընը հալտան չըգարըյօր,
հէր հալտէ պու թէլէկրաֆ եալան
օլաճագ տըր . ֆագաթ պունտտ
տախի պիր մանա վար տըր, հանի

Գանեա 11 յունվար . — Սուլ-
թանըն պիր իրաւոէսի իթհէմբա-
շայը Գանտիայո միւթհարիֆ
թային իթմիշ տիր : Պիր ինկի-
լիզ վաբօրը տէրտէսթ օլընանլարը
կէրի կէթիրիյօր : Պիւթիւն տիւ-
քնանլար գաբալը տըր . էհպի
ֆըրգա ֆըրգա օլուպ , հէսիրէրի
գուրթարաճաղըղ տէմէքտէ տիր-
լէր :

— (X) —

Լաքին թիւրքերին վատարւ-
նա էլան պիւ տէրէճէ էմնիյէթ
իթմէքտէ օլան պազը զէվաթ
Երւտղըն մէզքիւր պէյաննամէ-
սինտէն պազը իւմիտէր սէրտ ու
պէյան էյլէմէկէ պաշլամըշլար
ըտ : Թիւրք խալիբխաշլըը իւ-
զէրինէ էլան իւմիտ վար օլան
պու կիպիլէրին քէնտի քէնտիլէրինի
ալտաթմապտա օլտըգլաընը բէք
չօդ տէիլլէր վէ պիւրհանլար ի

Մէջբերելով ինչէն կրու՞մ հէնէն գաւառաբ բէք մուխթասար իսէտէ, թիւրք հիւրիւմէթ ինին պու կիւն պու սաաթա զատար զաթտարլըգ վիճառանսըլըգ թաթիգինտէն զէրբէ գաւառար շաշմամը վէ էրմէնի միլլէթինի մահլ իթմէք իշիւն իւշ տէօրթ սէնէլէրտէն պէրու թուլթաուշ օլաըլը Խօլա էլան տէվլամ իթմէքտէ օլաըլընը ըսպալթ հիթմէկէ ֆէֆայէթ իտէր:

— (X) —

Մէքիէկէ գապուլ օլունան հէր
պիր շահիրտ (չօճուզ վէ գըզ) 5
Քրանգ տուխուլիէ էօտէյէճէք
տիր, քէզա շահիրտան մուռլ տա-
իւի էօտէմէյէ մէճպար օլուպ,
մըգտարը պիլախէրէ Թադ. Խոր-
հուրպ խալին իտէճէք տիր:

—X—

Պուրկազում միևեմէքին միւլէթտալարըմզ պէնինտէ պիրգաչ ալտան պէրու ուլկունսըլլզլար հուսուա կէլմիշ օլտըզընտան, նապէճա հալլէրին էօնինիւ աւմագ իշին Սթանպօլ Պատրիարքարանընտան կէլէն պիր էմիրնամէ իզըրէ Դիր. Արսէն վրզ. վեհունի պու բազար կինիւ Պուրկազա ապիմէթ իտէճէք տիր:

— () —

Պուլկարիա տախիլիյէ նէլարէ-
թինին էմլինամէսի մուծիպ, Պուլ-
կարիատան իսլամաբը Հաճա
կիթմէսի մէնն օլընմըլ ալը . պու-
էմրէ մուխալէֆէթլէ գաշուպ կի-
տէնլէր պիլախէրէ ֆէնա խաս-
թալըգլար մինտէֆի օյսնա տէ-

կին Պուլկարիայա գապուլ օլըն.
մայաճագլար տըր :

Նէշլը օլընան գահուսննամէ մու-
ծիպիհճէ պիւթիւն սարրաֆլար
վէ սալիւ սէհէթլէր վէ մուգավէ-
լէլէր իլէ մուամէլէ իտէնլէր սէ-
նէտլէրէ վէ մուգավէլէլէրէ լու-
գօյմայա մէճպուր տըրլտը : Գա-
նունըն պու աճքեամընա ըրայէթ
իթտիրմէք իչիւն ֆիհանա (մալիյէ)
մէմուրլարը մուայէնէլէրէ կէզուպ
բուլսուլ սէհէտլէր իչիւն ճէզար
նագտիլէ ալաճագլար տըր :

Սօսորանիյէտէ վերիլէն գարար
իւզէրինէ, Պուկարիա 22 սան
ճաղա վէ 84 գազայա թագսիմ
օյրնաճագ տոր:

Վարնա պելէտիյէսի պու հաճ.
Թա պիր իլան չըգորմըն օլուպ,
հօլ բարասը իչիւն 10 ֆրանգ
Թալին օլընտըլընը վէ նագտէն
պու մէպլաղը վէրմէք իսիմէմէ-
յէնլէր յունվար 28 ինէ գոտաթ
պելէտիյէն կիտուպ, իսիմլէրինի
գայա իլթիթիւրէք պէշէր կիւն
չալըշաճագլարընը վէ քէղա վար-
նա զօգուգլարընըն հաբըլմասը ի-
չիւն հէրլի էննէպիլթապլաաաաա
լոնլարըն տախի տէօրտէր Ֆրանգ
էօտէմէյէ վէ եախստ կիտուպ ի-
քիշէր կիւն չալըշմայա պօծլու
օլտրգլարընըն իյան իթմիշ տիր

ПРАВИЛА ЛУЧШЕ

Փափաղողք պարտին դիմել խլմ-
բաղրութեանս հասցէին :

ՏԱՐԵՑ ՈՅՑ

Գրին 1 ֆրանգ, կը ծախուի Վառնա
 ցրավաճառ Ա. Զարբանէլեանի քով:
 Տ. Ղեւոնդ քահանան հրատարակած
 է նաեւ իր նախորդ տարուան օրա-
 ցոյցին յաւելուածը որ կը ծախուի 50
 անոցով: